



Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«22» հուլիսի 2019թվական N 77-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաաքացի Տանիմա Ղազանյանի (ծնված՝ 1962թ.) դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել Տանիմա Ղազանյանին, Նորա Լալանային, Հրանտ, Իվան, Լյուդմիլա և Նոռա Եպիսկոպոսյաններին համասեփականության իրավունքով պատկանող Մայակովսկի համայնքի 5-րդ փողոցի թիվ 28 հասցեի տնամերձ հողակտորում 2007 թվականին ինքնակամ կառուցված շինությունները (հիմք՝ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման N 1832051 վկայական, «Վալերիկ Գալստյան» ԱՁ-ի կողմից 2019 թվականի հուլիսի 16-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և «Վալերիկ Գալստյան» ԱՁ-ի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Տանիմա Ղազանյանին, Նորա Լալանային, Հրանտ, Իվան, Լյուդմիլա և Նոռա Եպիսկոպոսյաններին համասեփականության իրավունքով պատկանող Մայակովսկի համայնքի 5-րդ փողոցի թիվ 28 հասցեի տնամերձ հողակտորում 2007 թվականին ինքնակամ կառուցել է օժանդակ շինություններ՝ Տարտ=3.84 քառ.մետր, Տարտ=38.54 քառ.մետր, աստիճան՝ Տարտ=0.82 քառ.մետր, սանհանգույց՝ Տարտ=2.16 քառ.մետր:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8.1, 10, 11, 13 և 18-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Տանիմա Ղազանյանին, Նորա Լալանային, Հրանտ, Իվան, Լյուդմիլա և Նոռա Եպիսկոպոսյաններին համասեփականության իրավունքով պատկանող Մայակովսկի համայնքի 5-րդ փողոցի թիվ 28 տնամերձ հողակտորում ինքնակամ կառուցված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք,

ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.

1.Տանիմա Ղազանյանին, Նորա Լալանային, Հրանտ, Իվան, Լյուդմիլա և Նոռա Եպիսկոպոսյաններին համասեփականության իրավունքով պատկանող Մայակովսկի համայնքի 5-րդ փողոցի թիվ 28 հասցեի տնամերձ հողակտորում կառուցված օժանդակ շինությունները՝ Տարտ=3.84 քառ.մետր, Տարտ=38.54 քառ.մետր, աստիճանը՝ Տարտ=0.82 քառ.մետր, սանհանգույցը՝ Տարտ=2.16 քառ.մետր ճանաչել օրինական:

2.Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1) սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Մայակովսկի համայնքի բյուջե N 900105222229 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 57153 (հիսունյոթ հազար հարյուր հիսուներեք) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը :

2)իր միջոցների հաշվին պետք է վճարի կառուցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնական կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Գեղամ Ասատրյանի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Վեներա Փայտյանը :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2019թ.հուլիսի 22



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի, Հեռ 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«25» հուլիսի 2019 թվական N 78-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 և 51-րդ կետերի պահանջները, **որոշում եմ**.

1. Մայակովսկի համայնքի վարչական տարածքում գտնվող 07-043-0028-կադաստրային ծածկագրով 0.04 հա հողամասին տրամադրել հասցե՝

գյուղ Մայակովսկի, 10-րդ փողոց, 5/1 հասցե:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի

2019թ.հուլիսի 25